

17374

Q-41950

Dr. A.H.S.

Ս Ե Մ Ա Կ

: Ա. Ա. 1996

մ 15

ԵՀ „ՆԱ ՅԱՂԹԵՑ“

(Մի իրական պատկեր)

Տից 2 կող.

891.99
Վ-50

Թիվ 17

Տպարան «Էսպիրո» Ելիզավետա, № 17.

1911.

ԵՒ «ՆԱ ՅԱՂԹԵՑ»

(Մի պատկեր իրականութիւնից)

I

188.... Թուականն էր. էջմիածնի լուսաճանչ դմբէթը փողփողում էր մայր մտնող արևի շեղ ճառագայթների տակ ծիածանի ակնախտիդ ու խարուսիկ գոյներով։ Աշնան մեղմ զեփիւոը թեթևութեամբ սրվավացնում էր ծառերի տերեները ու անցնում դէպի Սուրմալուի անապատը «շատ շատ բարեւ» տանելով Արագածի հրաշագեղ լանջերի բուրաշատ ծաղիկներից և Վաղարշապատի փարթամայզիներից։

Ճեմարանի հիւսիսային կողմի բակը մի սրտաշարժ տևարան էր ներկայացնում։ Ամբողջ աշակերտութիւնը, բոլոր ուսուցիչները հաւաքուել էին մի բարձրահասակ ու գեղագէմ երիտասարդ հոգեռականի շուրջը և գնաս բարեւ էին մաղթում նըան։ Նրա խոշոր ու փայլուն աշքերից թափում էր հեղութիւնն ու միամտութիւնը, բայց կիտասած յօնքերն ու մի քիչ հաստ, սեղմուած զրթունքները վըկայում էին, որ նա առնական հոգու ու հաստատ բնաւորութեան տէր է։

Ուսուցիչները քաջալերում ու ցուց-
մունքներ էին տալիս այդ համարեա գեռ
պատանի կրօնաւորին, իսկ ընկերները
փաթաթուում էին ու լալիս սրտանց.—
«Ախ սիրելիներս, ասաց նա զգացուած,
ես գնում եմ և յուսով եմ, որ կվերա-
դառնամ, բայց աղօթեցէք, որ պարզերես
—տղամարդու պէս վերադառնամ»։ Էլ
չկարողացաւ շարունակել, յուզմունքը
խնդրեց նրան և նա կառքնատելով, անձ-
նատուր եղաւ իր սրտի փղձկոցին. դառն
ու քաղցր, անցեալի ու ապագայի մտա-
պատկերները պաշարեցին նրան։

II

Եւ նա գնաց, գիտութեան ծարաւը հո-
գում, ոսկէ երազների ցնորքը սրտում,
յուսալով համնել իր տեհնչած բարձրու-
թեանը գիտութեան ասպարիզում։ Կառքը
գնում էր և նա իր պատանի հոգու վառ
ցնորքներով վերասլանում էր դէպի հե-
ռաւոր ապագան, երբ իր ընկերակիցնե-
րով շրջապատուած, — գիտութեան, ճըշ-
մարտութեան դէնքերով, դինուած կվերա-
փոխեն հայկական ճնշուած ու թշուառ
եկեղեցու ընկած կացութիւնը, նոր կեանք,
նոր հոգի, նոր շունչ կմացնեն նրա մէջ։
Երբ անվստահելի իրականութեան բաղ-
մաթիւ խոչ ու խութերին յաղթելով,
իհամնեն այնպիսի բարձրութեան—թէ ի-

րենց գիտական աշխատութիւններով, թէ
քաղաքական նշանակութեամբ և թէ վե-
րանորոգչական կազմակերպութեամբ —
որ բոլորը ստիպուած կլինին պնդել, թէ
—այն, հաստատ որոշման, անխախտ երդ-
ման և անդուր աշխատանքի առաջ գլո-
ւարութիւն չկայ։

Այսպիսի մտքերով ու յոյզերով էր գը-
րաւուած երիտասարդ սքեմաւորը, որ ձե-
մարանից գուրս եկած ըլինելով, աշխար-
հին կեանք տուող ու աշխարհը քանդող
միւս յոյզերի մասին տեսական գաղա-
փար ունէր միայն։ Եւ նա գնաց, բայց
այնպիսի զօրեղ յօյզերի, հոգու խորքե-
րը ցնցող զգացումների պիտի պատահէր,
որ այդ ժամին իսկի մտքովն էլ չէին
անցնում։

III

Անցել էր երկու տարի։ Վահանը (այս-
պէս էր երիտասարդի անունը) նստած էր
մի կոկ, գեղեցիկ, բայց շատ համեստ
ունեակում և պարապում էր։ Նրա սե-
նեակի կահաւորութիւնը շատ պարզ էր.
Երկու աթոռ, մի հասարակ մահճակալ ու
մի զրասեղան, որը սակայն բեռնաւոր-
ուած էր բազմաթիւ հաստափոր գրքերով։
Գրասեղանի վերակ կախած էր էջմիածնի
ու Ճեմարանի փոքրադիր նկարները, իսկ
վրան շատ զերմաներէն զրքեր կային

բացած — բոլորը գիտական աշխատութիւններ:

Վահանի կենդրոնացած արտայայտութիւնն ու հաւաքուած յօնքերը ցոյց էին տալիս, որ նա զրագուած է շատ լուրջ՝ ժամեր անցան, բայց նա անշարժ պարապում էր: Երեկոյեան վերջալոյսը բարձրայարկ տանիքներից անդրագառնալով ընկնում էր ներս և նրա գեղեցիկ ու մտազբաղ գէմքին համակրելի խորհրդաւորութիւն էր տալիս:

Յանկարծ բացուեց հարեւան սենեակի գուռը և ներս մտաւ մի մրայօն, երիտասարդ գերմանունի, կանգնեց Վահանի ետել և սիրով ու խանդաղատանքով նայում էր նրա սևաթոյը խոպաներին ու զմայլուած ժպտում: Վահանը չնկատեց նրան և հանգիստ պարապում էր: Զինափան կամաց մի երկու քայլ արաւ ու իր գեղեցիկ գլուխը հանդարտ իջեցրեց Վահանի ուսին: Վահանի գէմքի վրայով մի թեթև ամպ անցաւ, բայց նա իսկոյն ժպտաց ու աչքերը բարձրացրեց գրքից:

—Ա՛ի Զինա, ի՞նչ յափշտակութեամբ կարդում էի ես.

—Է՛ն, ի սէր Աստուծոյքիչ պարապիր, քիչ, մեղք ես ախմա:

—Ո՛չ սիրելիս, ես իրաւունք չունեմ քիչ պարապելու, չէ՞ որ գու այդ լաւ գի-

տես: Քանի՛-քանի՛ անգամ բացատրել եմ քեզ, թէ ինչ յոյսեր են կապուած իմ այս երկար պարապմունքների հետ, ասաց Վահանը ու շուռ եկաւ, գրկեց Զինայի գլուխը: Երանց հայեցքները հանգիպեցին իրար:

—«Ու՛ն Զինա, Զինա, չէ՞ որ չպիտի խանգարես ինձ, չէ՞ որ տանջում ես ինձ իզուր տեղը, յոգնած խօսեց Վահանը, լոեց և գլուխը իջեցրեց առաջը դրած բաց գրքին. լոեց և Զինան:

—Բայց Վահան, մի՛թէ դու չէիր ասում, որ սիրում ես ինձ ու շատ ես սիրում, ասաց յուսահատ — ընկճուած Զինան:

—Այս, նոգիս, հիմա էլ եմ ասում, միշտ էլ կասիմ, որ սիրում եմ քեզ, շատ-անշափ, դու էլ ինձ ես սիրում, ես այդ զգում եմ, բայց չէ՞ որ այն էլ եմ ասել թէ մեր սէրը վերացական պիտի լինի և որքան հեռու լինենք, այնքան աւելի վաս ու անկեղծ կլինի:

—Ուրիմ Պղատոնակմն սէր:

—Ուզում ես Պղատոնական անուանիր, ուզում ես Սոկրատեան, բայց մեր պայմանը, այսինքն իմ պայմանը քեզ լաւ յայտնի է, որ մենք սիրելու ենք իրար իրեն ընկերներ, իրեն քոյր ու եղբայր. որ ես արգէն կապուած եմ մի թշուառ.

Նկեղեցու ապագայ յոյսերի հետ և որ
վերջապէս մեր սիրոյ պատճառով դու եր-
բէք չպիտի խանգարես ինձ, վերջացրեց
նա իր երկար նախադասութիւնը հեալով
և նայերով ուղիղ Զինայի աչքերին:

—Ներիբ ինդրում եմ, ներիբ սիրելի
Վահան, էլ չեմ խանգարիլ, էլ չեմ վշտաց-
նիլ, զիտեմ, որ ես թշուառ եմ և այդ է
գլխաւորը, ասաց Զինան լացակումած և
շարժուեց տեղից. կանգնեց ու մնաց քա-
րացած, աչքերը գետին զցած: Երկու րո-
պէ երկուան էլ լուռ էին ու յուղուած:

—Է՞ն սիրելիս, ես ինձ ամենեին թը-
շուառ չեմ համարում, որովհետեւ կայ մի
ապագայ, ոգևորութեան մի աղբիւր, որ
ինձ թե է տալիս, բացի դրանից ես շա-
րունակ պարապում եմ և ամենեին ժա-
մանակ չունիմ մտածելու թշուառ եմ թէ
երջանիկ—ասաց Վահանը քմծիծաղով,
վեր կացաւ ու ոկտեց հանգիստ քայլել
սենեակում: Զինան զլուխը բարձրացրեց,
ուզում էր խօսել, յանկարծ հարեան սե-
նեակից լսեց իր անունը և արցոնքի
միջից ժպտալով Վահանին, արագ ան-
ցաւ գնաց:

Վահանը մնաց մենակ. նրա գեղեցիկ
գէմքը պատեց տիբութեան քօղով. եր-
կար չկարողացաւ ըրջել ու յուսահատ ըն-
կաւ աթոփին, նորից զլուխը դրեց բաց

դրքի վրայ: Նա կուռում էր ինքն իր հետ,
նա տանջուում էր: Երա աչքերից արցունք
չէր թափւում, բայց փոքրիկ մանուկի
նման հեկեկում էր նա:—Ա՛յ, անիրաւ
դիպուած, ինչու հանդիպեցինք մենք մի-
մեանց, որ այսպէս տանջուենք: Խեղճ,
թշուառ աղջիկ, ասում էր ինքն իրեն,
ու այդ միտքը այրում էր նրան:—«Իսկ
եթէ չթողնեմ Զինային.... Զէ որ, եթէ
ուղենամ, իմ պրօֆէսօրների վկայութեամբ
զիտական փայլուն ասպարէզ է սպասում
ինձ, նէնց այստեղ—Գերմանիայում: Նա
հանգստանում էր, մէկը միւսից գրաւիչ
հեռանկարներ շարեւում էին նրա առաջ.
Բայց....—բայց ինչ կլինի իմ ուխտը, իմ
նպատակը.... ու նա ցնցւում էր ու նու-
րից մտածում. երեակայութեան առաջ
ուրիշ պատկերներ էին զալիս: Հայրենի-
քում անէծք են կարդում իր հասցէին
իբրև մի խարերայի, տմարդի, թոյլ հո-
գու ու կամքի ուժից զուրկ փալասի,
հները ծալրում ու ոտնատակ են տալիս
նրա ընկերներին ու նրանց պատիւը....

—Ոչ, յանկարծ ճշաց նա, վեր ցատկեց
տեղից, կարծես թէ մէկի հետ վիճելիս
լինէր.—հաղար Զինա ու հաղար կանա-
ցի սէր ինձ չեն կարող իմ ճանապարհից
շեղել:—Սա շատ լաւ է. ես խօսկան ա-
ռաքինի մարդ չեմ լինի, եթէ այսպիսի

բովերով չանցնեմ»։ մտածեց նա արդէն
հանգստացած։

IV

Այն օրից, երբ Վահանը ապրում էր Զինահնց տանը, երբ առաջին անգամ այդ երկու երիտասարդների կը ակու հայեցքները հանգիպել էին իրար, նրանք սիրել էին միմեանց մատաղ ու կոյս ուրբա- տի անկեղծ բռնկմամբ։ Ճիշտ է, Վահանը զիտէր, որ ինքը իրաւունք չունի, ըստ իր տուած խոստան, սիրելու և սէր խոս- տանալու որևէ է կնոջ, բայց սէրը յաղ- թում էր նրան ու ինքն իրեն հաւատաց- նում էր—թէ այն, սիրում է, բայց երբէք իր ուխտից յետ չի կանգնիլ, երբէք Զի- նայի հետ չի կապուիլ։ Նա վստահ էր իր հաստատակամութեան վրայ և յամառ կերպով կոսում էր իր սրտի թելազրու- թեան հետ։ Շատ, շատ անգամ էին վի- ճել նա և Զինան, թէ որ զգացումն աւե- լի զօրեղ է՝ սիրոյ թէ պարտականութեան և սրը կյաղթէ։ Վահանը միշտ պնդում էր, որ թէն կեանքի մէջ աւելի շատ սէրն է յաղթում, բայց պատահում են դէպքեր էլ, երբ պարտականութիւնն է յաղթում։ «Եւ այս անգամ ես կյաղթեմ» վեր- ջացնում էր նա։

—Ո՞չ, ես կյաղթեմ, կրկնում էր չա- րաձնի կերպով Զինան։

— Այդ ապագան ցոյց կտայ:

— Ել ի՞նչ ապագայ, — միթէ դու ինձ չե՞ս սիրում։

— Սիրում եմ, այն, իրեկ մի գեղեցիկ հոգու, զմայլելի արտաքինի տէր ընկերոջ և ոչ իրեկ մի կնոջ։

— Իա շատախօսութիւն է միայն, — ա- սում էր Զինան, բայց զգում էր, որ շատ էլ հեշտ չէ այս յամառ ասիացուն իր մտքից յետ կանգնեցնելը։ Ինչպէս երե- ւում է, մտածում էր նա, որա հոկայա- կան կազմուածքի մէջ, հզօր էլ կամք կայ։ Եւ միթէ իրօք սա պիտի յաղթէ ինձ…… Սրանից այն կողմը էլ չէր կարո- ղանում մտածել։ այդ սոսկալի էր նրա համար։

V

Անցել էր էլի երկու տարի. սիրոյ բռնկման ու հոկաճառութեան էլի բազ- մաթիւ դէպքեր էր տեղի ունեցել Վահա- նի ու Զինայի մէջ։ Շատ անգամ էր Վա- հանը ապացուցել, որ իր խօսքի տէրն է, որ երբէք իր պարապմունքները չի գիշիլ Զինայի սիրուց առաջացած ցանկութիւն- ներին բաւականութիւն տալու համար, բայց Զինան գետ չէր յուսահատուում, նա գետ երևակայում էր, թէ հրաժեշտի ժա- մին Վահանը կընկճուի և «ինքը կյաղթի»։

Դարնանային մի հրաշագեղ օր էր։

թէն շատ շոգ չէր, բայց նստակեաց մարդիկ ձգուում էին երեկոյեան զով պահուն շտապել դէպի ծառազարդ զրօնավայրերը օդ ծձելու, և հանդիստ առնելու:

Վահանը այդ օրը տուել էր իր վերջին քննութիւնը, աւարտում էր ոչ սովորական ուսանողների նման, այլ իր ընդունակութեան, աշխատասիրութեան ու գիտական պաշարի համար արժանանում էր այնպիսի կոչման, որ շատ քչերին է յաջողուում, մանաւանդ օտարազգիներից: Զնայելով այս բանին, նա մտազբաղ էր ու տիսուր: Երեք օրից յետոյ գնալու էր Անգլիա, թէ ճանապարհորդելու և թէ անգլիերէն սովորելու: Զինայի հետ պէտք է վերջին անգամ՝ գնային քաղաքից դուրս գտնուող պուրակը զբունելու և վերջին անգամ՝ իրար սիրտ բանալու: Վահանը և վախենում էր այդ տեսակցութիւնից, սարսուռ էր պատում նրա հսկայ մարմինը, և սրտով ցանկանում էր գէթ վերջին անգամ՝ զգալ նրա գգուանքը, պարփակել իր յիշողութեան մէջ նրա գեղանի աշքերի մուայլ թախիծը, էլ երբէք չտեսնելու, էլ երբէք չմոռանալու համար:

Զինան հագնուել էր թեթև, պարզ, բայց ճաշակով ու գեղեցիկ: Արգեօք սովորականից աւելի խնամքով էր կոկուել թէ ոչ, բայց Վահանին թուաց, որ կար-

ծես այդպէս չքննաղ երբէք չի եղել նա: Մի բոպէ նոյնիսկ վախեցաւ— չինի՛ թէ յաղթուի ինքը, բայց յետոյ ինքն էլ ծիծաղեց իր այդ մտքի վրայ.— «Կա՞յ իմ տղամարդութեանը, ասաց նա ինքն իւրեն, եթէ այսպիսի դժուարութեան առաջ պիտի ընկնուեմ»:

VI

Համարեա լուռ, միայն սովորական իւրերի մասին մի-մի խօսք փոխանակելով, անցան նրանք ամբողջ քաղաքը, մտան պուրակը և մի թաւուտքի մէջ շինուած փոքրիկ նստարանի վրայ նստեցին: Ոչ մէկը սիրտ չէր անում խօսել, նրանց աշքերը երբեմն միայն իրար էին առնում և էիր լուռ, միմեանց ձեռք բռնած նստած էին հանգիստ, կարծես ուզում էին արդարացնել բանաստեղծի այն խօսքը, թէ

Աշերուն բոցն երբ մարի,

Դադրի տրովին երբ սրտին,

Լոկ այն ատեն հարկ է, որ

Անզօր շուրթերն խօսին:

—Վահան, ուրեմն դու գնում ես հա, — վերջապէս խօսեց Զինան, — բայց գիտես, որ քո յետեկից միայն մի ճիշ կլսուի և այդ ճաշնը կլուի ընդ միշտ: Ոչ բարեկամս, այդպիսի բան չի լինիր:

Ես կգնամ, հոգուս ու սրտիս մէջ ունենալով քեզ և քո պատկերը մինչև զերեղ-

ման, իսկ գու, շատ կվշտանաս, բայց չէ
որ խելօք ու հասկացող աղջիկ ես...
կանցնի ժամանակ, կամաց-կամաց կսսե-
մանայ յիշողութեանդ մէջ իմ պատկերը
և կհաշտուիս այն մտքի հետ.... ուզում
էր էլի շարունակել, բայց խոհեմութիւն
համարեց լոել:

—Զգիտեմ, կտեսնենք, ասաց հաստ-
չելով Զինան ու լսեց: Վահանն էլ լսեց:
Երկար, շատ երկար մմացին. այդպէս
լուռ, նոյն իսկ վախենում էին նայել մի-
մանց: Զրօսնող հասարակութիւնը հե-
ռու էր նրանցից և նրանք էլ կարծես այդ
էին ուզում, որ իրենց խորհրդաւոր լուռ-
թիւնը խանգարող չլինի:

—Ե՞ս, որ այդպէս է, բեր նկարներս
գոնէ փոխանակենք, գոնէ իբրև մի յի-
շատակ, թէև ես գիտեմ, որ ինձ պէտք
չի գալու.... նորից խօսեց Զինան ու սկսեց
լալ: Նա ընկճուած էր և արդէն հաւատում
էր, որ ինքը յաղթուեց: Նկարը հանեց.
բռնած էր ձեռքին ու լալիս էր: Արցուն-
քի մի կաթիլ ընկառ նկարի վրայ.

—Ե՞ս, Զինա, ինչու ես լալիս, տես,
նկարն էլ փշացրիք, ասաց Վահանը բըռ-
նելով նրա ձեռքից:

—Ո՞չ, հանգիստ եղիք, աբտասուքս
կաթեց պատկերի հակառակ կնդմը. չի
փչացել:

Հ | Արմ.
Հ-4195

ՀԱՅՐ
891 99
Ա-50

Կ Ա Բ Ա Գ Ե Տ Ե Պ.

ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻՆ

ՄՐԲԱՋԱՆ ՀԱՅՐ,

ՑԱՐԳԵԼԻ ՌԻՍՈՒԹԻՉ,

Հ 0 0 3

Երերոն զրչիս այս թոյլ ու
փոքրիկ խաղը խնդրում եմ ըն-
դունեցէք իբրև խորին յարգան-
քիս մի դուզնաքեայ առնաւատ-
չեայ:

Սիմոկ

ԽԿԲ. № 22044

Վահանը վերցրեց նկարը, շուռ տուեց
և տեսաւ, որ թուղթը ծծել է արցունքի
կաթիլը և մի կոր, գունատ բիծ է առա-
ջացել. մի բուլէ մտածեց, ապա հանեց
գրիչը և մանր տառերով զբեց այդ բծի
շուրջը՝ «Արցունքի կաթիլ»:

Զինան արտասուաթոր աչքերով կար-
դաց զբածը և փաթաթուեց Վահանին:
Վահանը կանգնեց, գրկեց նրան և ապա
համբուրելով նրա աչքերը, ասաց. — «Իմ
այս վերջին համբոյը վկայ լինի թող,
որ թէս «Ես յաղթեցի», բայց քո ար-
ցունքի կաթիլը երբէք, երբէք ես չեմ
մոռանալ:

Վեր կացաւ և Զինան ու անխօս ու
լուռ, առանց մի բառ արտասանելու,
տուն դարձան:

VII

Երեք օրից յետոյ Վահանը գնաց Անդ-
լիա, մի տարուց յետոյ դարձաւ հայրե-
նիք, նուիրուեց ուսուցչական գործին ու
գիտական աշխատութիւնների:

Անցան տարիներ, նա շատ գժուարու-
թիւնների, անյաջողութիւնների ու հա-
լածանքների հանդիպեց խաւար ու ան-
կիրթ շըջապատողների կողմից, բայց
առաջ գնաց, բարձր գիրք ու մեծ ժողո-
վը բականութիւն ձեռք բերեց:

Շատ, շմատ անգամ էր նա մտածում



29469-67

17374

Զինայի մասին, յիշում նրա ձայնը, ամեն
մի շարժուածքը, նրա խօսքերն, արցունքը.
յիշում և տանջւում ու երկար մտածում,
թէ, միթէ իրօք չէր կարող հասարակու-
թեան շատ պիտանի անդամ դառնալ, ա-
ռանց հոգեորականի սքեմի, և այն եղ-
րակացութեանն էր գալիս՝ թէ գուցէ
այն, գուցէ նոյնիսկ աւելի, բայց այժմ
երբ ժամանակ է անցել, և երբ մի ան-
դամ հաստատ որոշմամբ ուխտ է կազել,
պիտի հաստատ էլ մնայ իր ուխտին:

Նրա իմաց գանգուրների մէջ սպիտակ-
ներ երևան եկան, բայց նա երբէք, եր-
բէք չմոռացաւ ոչ Զինայի պատկերը և
ոչ նրա «արցունքի կաթիլը», բայց միշտ
այդ պատկերին նայելիս, մեղմ ժպտով
ասում էր ինքն իրեն.

—Այն, ես յաղթեցի, ուրիշ շատ խո-
չընդուների էլ եմ յաղթել այնուհետեւ,
բայց դեռ շատ բաներ կան իմ առաջ, ու
բոնց պիտի յաղթեմ:

Ու նա վեհ հոգուն յատուկ հաւատով
ու յուսով դիմադրում է դեռ շատ ար-
գելքների:



2013

X

H ADM.
H 2-4195₂

Ծախուռմ է բոլոր գրավաճառների մօտ:
Գումարով զնողներին զիջում: